ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

17 նոյեմբերի 2025թ. **N 76-Ա**
ք.Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՔՎԵԱՐԿՎԱԾ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԱԶԳԱՅԻՆ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՀԵՏՈ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասով և հիմք ընդունելով «Մայր Հայաստան» Ազգային-դեմոկրատական կուսակցության լիազոր ներկայացուցիչ՝ Հարություն Խաչիկյանի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Մայր Հայաստան» Ազգային-դեմոկրատական կուսակցությանը թույլ տալ.

1) համալրել նախընտրական հիմնադրամը՝ չկատարված պայմանագրային պարտավորությունների կատարման համար, 1.947.023 (մեկ միլիոն ինը հարյուր քառասունյոթ հազար քսաներեք) ՀՀ դրամի չափով,

2) Արդշինբանկ ՓԲԸ-ում բացված նախընտրական հիմնադրամի միջոցներից վճարում կատարել մինչև քվեարկության նախորդ օրը կատարված գործարքների համար՝ 2.218.193 (երկու միլիոն երկու հարյուր տասնութ հազար հարյուր իննսուներեք) ՀՀ դրամի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ